Տարօսիկ - Մայիս-Յունիս

Քառասուն օր,
    քառասուն գիշեր...

Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը,
    հա՛մ...
Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը,
    բա՛ր...
Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը,
    ձո՛ւմ...
Ձո՛ւմ, ձո՛ւմ, երեսուն...
    Երեսունէն քառասուն...
        Քառասունը Համբարձո՜ւմ...

Այս գիշեր համբարձում է,
    Հելէ հելէ հելէ նիննոյէ...
Աղջիկներուն հարցում է,
    Հելէ հելէ հելէ նիննոյէ...

Վիճա՜կ վիճակ,
տեսա՜կ տեսակ,
կարմիր շապիկ,
ոսկի կոճակ,
վարդ մանուշակ...

Վիճակ վիճակ,
    դուռն ու ճիճակ,
կարմիր շապիկ,
    ոսկի կոճակ...

Եկուր ինծի պագ մը տուր,
    հելէ հելէ հելէ նիննոյէ...
Այսօր չըլլայ վաղն ուշ է,
    հելէ հելէ հելէ նիննոյէ...

Վիճա՜կ վիճակ, տեսա՜կ տեսակ,
կարմիր շապիկ, կանանչ գօտիկ
ոսկի կոճակ, արծաթ օղակ,
շուշան մեխակ, վարդ մանուշակ...

Տարոսիկ - Մայիս-Յունիս

Ո՞ւր կ՛երթաս դուն Շուշան,
կ՛արգիլեմ, կ՛արգիլեմ...
Մանուշակ ժողվել կ՛երթամ,
մի արգիլեր, մի արգիլեր...

Մանուշակը ի՞նչ պիտի ընես,
կ՛արգիլեմ, կ՛արգիլեմ...
Մէկ աղուորին պիտի տամ,
մի արգիլեր, մի արգիլեր...

Այն աղուորը ո՞վ է,
կ՛արգիլեմ, կ՛արգիլեմ...
Այն աղուորը դո՛ւն ես, դո՛ւն ես, դո՛ւն ես,
մի արգիլեր, մի արգիլեր...
Նուրին նուրին եկեր է,
կարմիր շապիկ հագեր է...
Նուրին նուրին եկեր է,
կանանչ գօտիկ կապեր է...

Նուրին նուրին ի՞նչ կ՛ուզէ...

Կթան կովէն իւղ կ՛ուզէ,
չալ հաւէն հաւկիթ կ՛ուզէ,
երկինքէն ամպեր կ՛ուզէ,
ամպերէն անձրեւ կ՛ուզէ...

Վարդավա՜ռ... Վարդավա՜ռ...

Պա՛ղ ջուր,
տա՛ք ջուր...
Տա՛ք ջուր,
պա՛ղ ջուր...

Ախ նինար, ճան նինար,
հանիկը նինարէ նինար,
ճանիկը նինարէ նինար...
Քառասուն կուժ,
քառասուն կարաս...

Տարոսիկ - Մայիս-Յունիս

Մեր տան առաջ քառսուն կարաս,
հէլէյ տօն, տօն է եարս...
Ձեր տան յիտեւ քառսուն կարաս,
հէլէյ տօն, տօն է եարս...

Քառսուն կարսի գինին է խաս,
հէլէյ տօն, տօն է եարս...
Ամեն կարսին պագ մը պիտ տաս...
հէլէյ տօն, տօն է եարս...

Տի՛լ տի՛լ հարսանիք,
մենք կը խաղանք
տօն տօնիկ...

Տի՛լ տի՛լ հարսանիք,
մենք կը խաղանք
տո՛ւն տունիկ...

Տնակ տունիկ,
հազարաշէն երդիք,
ձեզի մեզի
Տարոսիկ...